ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARPA-SEVAN
OPEN JOINT STOCK COMPANY

N: 71249
«11» 03 2022

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
Ջրային կոմիտեի նախագահ
պրն. Վ. Գևորգյանին

Հարգելի պարոն Գևորգյան

Ձեզ է ներկայացվում 17.08.2004թ.-ին կնքված N ԾՁԲ-04/36 գնման պայմանագրի N 16 Համաձայնագրի N COD/0370 բանկային երաշխիքը:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն Պարույր Հակոբյան

Կատարող՝ Ա. Մովսիսյան
094 46-00-49

ՀՀ, ք. Երևան 0012, Վ. Վաղարշյան 20
հեռ.՝ (374 12) 21 11 11
info@arpa-sevan.am
20 V. Vagharshyan str., Yerevan 0012, RA
tel.: (374 12) 21 11 11
www.arpa-sevan.am

ConverseBank

«11» 03 2022

№ CDO/0370

ԵՐԱՇԽԻՔ N CDO/0370
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ջրային կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Արփա-Սևան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 17.08.2004թ.-ին կնքված N ՇԶԲ-04/36 Պայմանագրի կնքվելիք N 16 Համաձայնագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 50 000 000 /հիսուն միլիոն/ ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 11.03.2022թ.-ից մինչև 17.08.2004թ.-ին կնքված N ՇԶԲ-04/36 Պայմանագրի կնքվելիք N 16 Համաձայնագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 31.05.2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՇԶԲ-04/36 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կոնվերս Բանկ ՓԲ Ընկերության

Իրավասու անձ

Վարկային գործառնությունների գլխավոր տեսուչ
Deputy Head of Credit Operations
Ինեսա Կազարովա
Inesa Kazarova

For Credit Operations
26/1 V. SARGSYAN str., YEREVAN
CONVERSE BANK CJSC, 00000291

Կատարող՝ Ս.Սարոյան/ Հեռ.՝511 211,ներքին 2381

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 26/1
Հեռ.՝ (+374 10) 511 211, Ֆաքս՝ (+374 10) 511 212
www.conversebank.am

"Converse Bank" CJSC
26/1, V. Sargsyan str., Yerevan 0010, RA
Tel.: (+374 10) 511 211, Fax: (+374 10) 511 212
www.conversebank.am

014924